ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

23 հոկտեմբերի 2024թ. թիվ 860-Ա

Հ.ՎԱՆՅԱՆԻ ՀԵՏ ԿՆՔՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ
ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 111-րդ հոդվածի 1-ին մասի, ղեկավարվելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասով և հիմք ընդունելով ՀՀ Լոռու մարզպետի 2019 թվականի հոկտեմբերի 31-ի թիվ 624-Ա որոշման 1-ին կետը՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Հրանուշ Դավիթի Վանյանին 2024 թվականի նոյեմբերի 4-ից ազատել «ՀՀ Լոռու մարզի Շամուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի տնօրենի պաշտոնից և լուծել նրա հետ 2019 թվականի նոյեմբերի 1-ին կնքված աշխատանքային պայմանագիրը:

2. «ՀՀ Լոռու մարզի Շամուտի հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հաշվապահին՝ Հայաստանի Հանրապետության Աշխատանքային օրենսգրքի 130-րդ հոդվածով սահմանված կարգով Հրանուշ Վանյանի հետ կատարել վերջնահաշվարկ:

3. Լոռու մարզպետի աշխատակազմի անձնակազմի կառավարման, փաստաթղթաշրջանառության և հասարակայնության հետ կապերի վարչության պետին՝

Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 5-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով սույն վարչական ակտը ստորագրվելուց հետո եռօրյա ժամկետում էլեկտրոնային փոստի միջոցով կամ առձեռն ծանուցել հասցեատիրոջը:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱՋԱՐՅԱՆ
2003720081

2024-10-23 18:16:15 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱՋԱՐՅԱՆ

2024թ. հոկտեմբերի 23
ք.Վանաձոր